



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 31 » « հոկտեմբեր » 2019թ. № 610-Ն

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Նշանակել ծառայողական քննություն միջազգային համագործակցության վարչության միջազգային ծրագրերի կառավարման ու մոնիթորինգի բաժնի գլխավոր մասնագետ Քրիստինե Խաչատրյանի կողմից ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝  
 1) ՀՀ փոխվարչապետ՝ Մ. Գրիգորյանի 2019 թվականի սեպտեմբերի 27-ի N 05/61.1/44382 հանձնարարականը սահմանված կարգով և ժամկետում ընթացք չտալու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝  
 1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,  
 2) Նաիրա Ալավերդյան - Քարտուղարության պետ,  
 3) Մերի Բաբայան - Անձնակազմի կառավարման բաժնի պետ,  
 4) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ.ԶԻԼԱՎՅԱՆ

« 31 » « հոկտեմբեր » 2019թ.  
 ք.Երևան